



ՍիաՄանթո

Անդրանիկ

Ինքն էր, որ Երագիս մարմարեայ եզերքներուն վրայ, այս գիշեր,
Ապառաժի մը նման անյաղթելիօրէն ուռքի,
Իր ընթոստացողի հրեղէն գլուխն աստղերուն մէջ մխրճելէն,
Ու իր ձեռքը ատելութեան սուրերովը զինած,
Հողին փրկութեան սիրովը հրաշացած եղբօր մը նման,
Որ եղբօր մը օտարացումէն իր հոգին կ'արիւնէ,
Խօսեցաւ ինձի ան, եւ իր բառերը իրարու ետեւէ, եւ կարգ առ կարգ,
Խիստ էին եւ քաղցր եւ ճշմարիտ եւ քինայոյզ եւ առնական...

«Եւ ահաւասիկ ես եմ, ո՛վ մեղկութեան ու անշարժութեան զաւակ,
Որ աղմկայոյցօրէն՝ այս իրիկուն հեռուներէն կու գամ,
Քու երագուն եւ անտարբեր ու անգործօն ու եսական ու տկար
Երիտասարդի մարմինդ ու էութիւնդ ու հոգիդ,
Բազուկիս հարուածովը ու սուրերուս շառաչին հետ,
Կռիւներու հարկադրիչ ժամերուն համար, վերջնականապէս ցնցելու...
Ունկնդրէ՛ իմ ձայնիս, որ այս վճռականութեան օրերուն
Մեր ցեղին, մեր վրէժին ու մեր արիւնին աղաղակն է ահարկու,
Ու խառնուէ՛, ընկերացի՛ր, եղբայրացի՛ր սա՛ մեր հզօրաքայլ ամբոխին հետ՝
Եթէ դեռ քու հոգիդ մէջ ազատութեան որեւէ կայծ վառ մնաց,
Եթէ դեռ քու բազուկներդ քաջութիւնը ունին թշնամիներ հարուածելու,
Եթէ սիրտդ գէթ անգամ մը խոցոտուեցաւ մեր մայր-հողին մահացումէն,
Եթէ ցեղիդ տառապանքէն ու անմեղներու կոտորածին մղձաւանջէն
Քու ներսիդիդ ատելութեան ու բարկութեան անտառները բարձրացան...

Եթէ դուն դեռ կեանքիդ մէջը պիտի կրնաս նպատակի մը փաթթուի,
Եթէ դեռ քու աշուրներդ այս անօգուտ արցունքներէն չկուրցան...
Եթէ դուն քու աղօթքներդ Ատելութեան գոռումներու փոխեցիր,
Եթէ ցեղիդ ռազմական ու արեգակէ արիւնին
Երակներուդ եւ գլխուդ մէջ բորբոքուիլը դեռ կը գգաս,
Եթէ դեռ Արամին, Տիգրանին, Արտաշէսին եւ Վարդանին
Յաղթանակող գօրութենէն քու մէջդ շունչ մը մնաց,
Դիւցագնական քայլերէն քու երագողի նայուածքներուդ առջեւ
Անճնութեան, վրէժի եւ ազատութեան ճանապարհ մը բացուեցաւ,
Ոտքի՛ կեցիր այն ատեն, եղբայրացի՛ր խումբերուս ու մրրկուէ՛ անոնց հետ,
Որովհետեւ, գիտցիր որ այս գոհաբերումի, ընդվզումի եւ յոյսի օրերուն
Մեր ամէն մէկուն համար անկողնի մէջ հոգի տալը վատութիւնն է
վատութիւններուն...»:

Յանկարծ խումբերը հեռացան արեւածագին կրակներուն մէջէն,
Ու իրենց կամատրի գիտակից ու վճռական քայլերուն հնչիւնը երկաթեայ
Մարմարակոյտեր փշրող անհամար կռաններու հնչիւնը ունէր...
Մինչդեռ թշնամիներէն անջատուած գլուխներ ջահերու պէս կը բոցավառէին՝
Իրենց ուսերուն վրայ բարձրացուցած սուրերուն կատարներէն...
Եւ ես այն ատեն՝ նախանձութեամբ ու տարփանքով հողին վրայ ծնրադիր՝
Իրենց հերոսի քայլերուն հետքը երկիւղածօրէն համբուրեցի...